

ՏԵՂԵԿԱՆՔ

**ԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ԿՈՌՈՒՊՏԻՈՆ ԵՐԵՎՈՒՅԹՆԵՐԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ
2011-2012 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱԼԻՐ ԾՐԱԳՐՈՎ 2012 ԹՎԱԿԱՆԻՆ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ
ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԸՆԹԱՑՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
(2-րդ եռամսյակ)**

Միջոցառման անվանումը	Ակնկալվող արդյունքը 2012	Միջոցառումների կատարման արդյունքները
<p>1. Կրթության ոլորտի իրավական ակտերի վերանայում, կոռուպցիայի ռիսկերի գնահատում</p>	<p>- ոլորտի 50 իրավական ակտեր վերանայվել են</p>	<p>«Հ կրթության և գիտության նախարարի՝ 14.12.2011թ. N1310-Ա/Ք հրամանով հաստատվել է «Հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի ատեստավորմանը ներկայացվող փաստաթղթերի ցանկը»», 06.04.2012թ. N260-Ա/Ք հրամանով հաստատվել են «Հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի վարպետության մակարդակի մասին» տեղեկանքի և բնութագրիչների ձևերը, 18.05.2012թ. N496-Ն հրամանով հաստատվել է «Ատեստավորման ենթակա ուսուցչին վերապատրաստող երաշխավորված կազմակերպությունների ցանկի ձևավորման կարգը»», 03.05.2012թ. N388-Ն հրամանով հաստատվել է «Ուսումնական հաստատության սովորողների կողմից կրթական ծրագրերի յուրացման, ամփոփիչ ստուգման կամ ատեստավորման անցկացման, սովորողների փոխադրման, ավարտման և ուսումնական տարվա ընթացքում 120-200 ժամ բացակայած սովորողի՝ հաջորդ դասարան կամ հանրակրթության հաջորդ աստիճան փոխադրման կարգը»: «Հ կառավարություն հաստատման է ներկայացվել «Հանրակրթական հիմնական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատության հերթական ատեստավորման ենթակա ուսուցչի վերապատրաստման կարգը»: Լրամշակվել են՝ «ՀՀ հանրակրթական ուսումնական հաստատություն սովորողի ընդունելության, տեղափոխման և ազատման կարգը» և «Էքստեն (դրսեկություն) փոխադրական և ավարտական քննություններ կազմակերպելու կարգը»: Մշակվում են՝ «Սովորողի անհատական ուսուցման», «Հանրակրթական ուսումնական հաստատության սովորողի ուսումնական առաջադիմության գնահատման երաշխավորությունների» և «Նախադպրոցական ուսումնական հաստատությունների նյութատեխնիկական հագեցվածության նորմատիվները (Փափուկ գույքի հագեցվածության նորմատիվները՝ ըստ նախադպրոցական ուսումնական հաստատությունների տեսակների և խմբերի)» կարգերը, ինչպես նաև «Նախադպրոցական ուսումնական հաստատության տարիֆիկացիոն ցուցակի ձևաթուղթը»: Նախատեսվում է մշակել «Ուսուցչի կողմից հավաքագրվող անհրաժեշտ կրեդիտների անվանացանկը, չափորոշիչները և նվազագույն չափաքանակը»: Մշակվում են «Հայաստանի Հանրապետության բարձրագույն մասնագիտական ուսումնական</p>

		<p>հաստատություններում երկրորդ մասնագիտություն ստանալու» և «<Կրթական ծրագրերի իրականացման լիցենզիայի գործողությունը կասեցված և (կամ) դադարեցված բարձրագույն ուսումնական հաստատությունների (կամ դրանց մասնագիտությունների) սովորողների ընթացիկ և (կամ) ամփոփիչ ատեստավորման» կարգերի նախագծերը:</p> <p>«Կառավարության՝ 26.04.2012թ. N597-Ն որոշմամբ հաստատվել է «Պետական և ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների ընդունելության (ըստ բակալավրի կրթական ծրագրի) կարգը»:</p>
<p>2. Ավարտական, միասնական և կենտրոնացված քննությունների գործընթացի վերանայում</p>	<p>- կազմված են գրավոր և բանավոր քննությունների փորձարկված հարցերի բանկեր՝ յուրաքանչյուր առարկայի գծով գրավոր քննության 5000 հարց, բանավոր քննության 1000 հարց, որոնք ներառում են ուսումնական ծրագիրն ամբողջ ծավալով,</p> <p>- հրապարակված են հարցերը՝ պատասխաններով</p>	<p>ԳԹԿ-ն հրատարակել է «<Հայոց լեզու և հայ գրականություն» և «<Մաթեմատիկա» առարկաների շտեմարանները՝ օգտագործելով նաև հանրապետության տարբեր մարզերի հանրակրթական դպրոցների ուսուցիչների ներկայացրած թեստերի նմուշները (Ա և Բ մակարդակներով): «<Հայոց լեզու և հայ գրականություն» առարկայի առաջադրանքների շտեմարանը հրատարակվել է 4 մասով, իսկ «<Մաթեմատիկա» առարկայի շտեմարանը՝ 2 մասով: Այս տարի դիմորդը նախապես տեղեկացված էր նշված առարկաների քննության ժամանակ իր առջև դրվող թեստի առաջադրանքներին:</p> <p>ԳԹԿ-ի կողմից հրատարակվել են նաև առարկայական ուղեցույցները եւ նոր ուսումնական տարվա քննությունների շտեմարանները:</p> <p>Նախատեսվում է մշակել նաև «<Կենսաբանություն»», «<Ֆիզիկա»», «<Քիմիա»», «<Օտար լեզու»», «<Հայոց պատմություն»», «<Աշխարհագրություն»» առարկաների շտեմարանները:</p>
<p>3. Բարձրագույն կրթության ֆինանսավորման արդյունավետ համակարգի ներդրում՝ ԲԿ որակի և համապատասխանության բարձրացման, արդյունավետության բարելավման և հասարակության տարբեր սոցիալական խմբերի համար հավասար մատչելիության ապահովման նպատակով</p>	<p>- ներդրված են կրթաթոշակներ, նպաստներ՝ համակցված ուսանողի առաջադիմության, կարիքավորության և տնտեսության զարգացման առաջնային ոլորտների պահանջարկի և այլ գործոններով,</p> <p>- ընդլայնված են ուսանողի աջակցման ծառայությունները, մասնավորապես՝ ուսանողական վարկեր, վարձավճարների զեղչման, վճարների հետաձգման մեխանիզմների կիրառում,</p> <p>- սահմանված է ըստ մասնագիտությունների</p>	<p>«Կառավարության հավանությամբ սկսվել են գերակա նշանակություն ունեցող մասնագիտությունների ցանկի կազմման և մասնագետների պահանջարկի գնահատման աշխատանքները: Ս/թ հունիսի 27-ին «Կառավարություն է ներկայացվել պետության համար առաջնային նշանակություն ունեցող տնտեսության ճյուղերի զարգացման ծրագրերի հիման վրա գերակա նշանակություն ունեցող մասնագիտությունների ցանկի որոշման և մասնագետների պահանջարկի գնահատման վերլուծության հաշվետվությունը:</p> <p>Մշակման փուլում են ուսանողի ֆինանսական վիճակի գնահատման չափանիշները և ուսանողների ֆինանսական աջակցության ծրագիրը /կարգը/:</p> <p>«Կրթության և գիտության նախարարի (27.06.12թ. N646-Ա/Ք) և «Էկոնոմիկայի նախարարի (28.06.12թ. N526-Ա) համատեղ հրամանով հաստատվել է «<Ուսման վարձերի ձևավորման մեթոդաբանությունը»:</p> <p>Իսկ ուսանողական վարկերի տրամադրման գործընթացը դադարեցվել է 2011 թվականի սեպտեմբերի 7-ին «< վարչապետի մոտ կայացած խորհրդակցության թիվ 14.7/[87922]-11 արձանագրային որոշմամբ:</p>

	<p>վարձավճարների չափի որոշման մեթոդաբանությունը,</p> <p>- ներդրված է բուիերի կապիտալ ծախսերի և զարգացման ծրագրերի ֆինանսավորում,</p> <p>- ավելացված են բուիերի ֆինանսավորման ծավալները</p>	<p>Հիմնադրվել է Նորարարությունների մրցակցային հիմնադրամը, և ՀՀ կառավարության կողմից հավանություն է տրվել նշված հիմնադրամի կողմից բուիերին դրամաշնորհների տրամադրման գործընթացին:</p> <p>Բարձրագույն կրթության ֆինանսավորման ծավալը 2012 թվականին պահպանվել է 2011 թվականի մակարդակին՝ 4.8մլրդ դրամ, չնայած այն հանգամանքին, որ բուիերի ուսանողների թվակազմը նվազել է կապված 2011 թվականին դպրոցների շրջանավարտներ չլինելու հետ, իսկ մեկ ուսանողի միջին տարեկան ծախսը ավելացել է 13.7%-ով՝ կազմելով 351.3 հազար դրամ:</p>
<p>4. Հանրակրթական ուսումնական հաստատությունների ֆինանսավորման ծավալների ավելացում</p>	<p>- ներդրված է «Հանրակրթական ուսումնական հաստատություններին ՀՀ պետական բյուջեից լրացուցիչ ֆինանսավորման կարգը», որը կսահմանի գործունեության արդյունավետության և որակի ցուցանիշներից կախված զարգացման ֆինանսավորման նոր մեխանիզմ,</p> <p>- սահմանված է ֆինանսավորման նոր բանաձև, որը տարբերակում է ֆինանսավորումն ըստ կրթական աստիճանների</p>	<p>«Հանրակրթական ուսումնական հաստատություններին ՀՀ պետական բյուջեից լրացուցիչ ֆինանսավորման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը 2011 թվականի հունիսի 8-ի թիվ 01/11.1/6082-11 գրությամբ ներկայացվել է ՀՀ արդարադատության նախարարություն: Փորձագիտական եզրակացություն ստանալուց հետո այն սահմանված կարգով ներկայացվել է ՀՀ կառավարություն, սակայն իրավական ակտի ընդունումը ՀՀ կառավարության կողմից հետաձգվել է:</p> <p>«Հանրակրթական ուսումնական հաստատությունների լրացուցիչ ֆինանսավորման մրցույթի սահմանման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծին անդրադարձ կլինի «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքում համապատասխան փոփոխություններ կատարելուց հետո:</p> <p>ՀՀ կառավարության 2011 թվականի մարտի 18-ի թիվ 259-Ն որոշմամբ սահմանված է հանրակրթական դպրոցների ֆինանսավորման նոր բանաձև, որը տարբերակում է նաև ֆինանսավորումն ըստ կրթական աստիճանների և ուժի մեջ է մտել 2012 թվականի հունվարի 1-ից:</p>
<p>5. Միջին մասնագիտական և բարձրագույն կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ վերահսկողության իրականացում</p>	<p>- տեսչավորված են ՄՄՈՒՀ-ների 50%-ը,</p> <p>- տեսչավորված են ԲՈՒՀ-երի 50%-ը</p>	<p>ՀՀ կրթության և գիտության նախարարի 29.03.2012 N152-Ա հրամանի համաձայն ՀՀ մարզերի և Երևան քաղաքի հանրակրթական հիմնական ծրագրեր իրականացնող միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում (բոլոր միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների գրեթե 90%-ում) իրականացվել է ընդունելության, փոխադրման, տեղափոխման, ավարտման կարգերին համապատասխան սովորողների շարժի թեմատիկ ստուգում:</p> <p>Բարձրագույն ուսումնական հաստատություններում ՀՀ օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ վերահսկողություն կիրականացվի «Կրթության պետական տեսչության մասին» ՀՀ օրենքում համապատասխան փոփոխություն կատարվելուց հետո: Ներկայումս նշված օրինագիծը ՀՀ Ազգային ժողովում է:</p>

<p>12. Վարչական իրավախախտումների մասին օրենսդրության մեջ կրթության ոլորտի իրավախախտումների ցանկի վերանայում</p>	<p>- վարչական տույժերի կիրառում՝ ըստ կրթական մակարդակների</p>	<p>2011թ. 1-ին եռամսյակում «Կառավարություն ներկայացված՝ «Վարչական իրավախախտումների մասին» «Նոր օրենսգրքում «Կրթության պետական տեսչությանը՝ ըստ կրթական մակարդակների, ուսումնական հաստատությունների նկատմամբ վարչական տույժեր կիրառելու լիազորություն վերապահելու մասին առաջարկությունը ներկայումս գտնվում է «Ազգային ժողովում»:</p>
<p>13. Կրթության ոլորտի թափանցիկության, հաշվետվողականության և հանրային իրազեկման բարձրացում</p>	<p>- լուսաբանված է կրթության ոլորտում իրականացվող հակակոռուպցիոն ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացման ընթացքը,</p> <p>- գործում է «ԿԳ նախարարության պաշտոնական նոր կայքը, որում գործում է ոլորտում իրականացվող հակակոռուպցիոն ծրագրերի տեղեկատվական էջ,</p> <p>- ՁԼՄ-ներով հրապարակվել են ուսումնառության տվյալ ժամանակահատվածում իրականացվող գործընթացում շահառուների համար հնարավոր առկա ռիսկերի վերաբերյալ պարզաբանումները,</p> <p>- հրապարակված են կրթության ոլորտում իրականացվող մրցույթների գնահատման չափանիշները և արդյունքները,</p> <p>- լուսաբանվել են ուսանողների շրջանում իրականացված ուսումնասիրությունների արդյունքները</p>	<p>«Կրթության և գիտության նախարարության պաշտոնական կայքում www.edu.am գործում է ոլորտում իրականացվող հակակոռուպցիոն ծրագրերի տեղեկատվական էջ: Բացվել է «Կրթության և գիտության նախարարության «Study in Armenia» օտարալեզու կայքը:</p> <p>«Կրթության և գիտության նախարարության պաշտոնական կայքում և կրթական պորտալում բացվել է «Հանրային քննարկում» բաժինը, որը հնարավորություն է տալիս հանրությանը մասնակցել իրավական ակտերի նախագծերի մշակման աշխատանքներին: Հանրային քննարկումների է դրվել 2012 թվականին մշակված և լրամշակված իրավական ակտերի նախագծերը:</p> <p>Կայքում տեղադրվել են հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի թափուր պաշտոնի մրցույթի հայտարարությունները, ինչպես նաև հանրակրթական ուսումնական հաստատության ղեկավարման իրավունք (հավաստագիր) ստանալու համար իրականացվող վերապատրաստումների ժամանակացույցերը: «Կրթություն շաբաթաթերթում» հրապարակվել են հանրակրթական դպրոցի ուսուցչի թափուր տեղի համար անցկացվող մրցույթի հայտարարությունները:</p>
<p>14. Գիտելիքի արժևորմանը միտված հասարակական կարծիքի ձևավորում</p>	<p>- հեռարձակվել են սոցիալական հոլովակներ</p> <p>- հրապարակային խրախուսման են</p>	<p>2011-2012 ուսումնական տարում ուսումնական պլանով նախատեսված 16 առարկաներից անցկացվել են դպրոցականների առարկայական օլիմպիադաների մարզային և հանրապետական փուլերը:</p> <p>Հրապարակային խրախուսման են արժանացել ինտելեկտուալ խաղերի և մրցույթների, առարկայական</p>

	արժանացել ինտելեկտուալ խաղերի և մրցույթների, առարկայական օլիմպիադաների հաղթողները, լավագույն ուսանողներն ու աշակերտները	օլիմպիադաների հաղթողները, լավագույն ուսանողներն ու աշակերտները: Հուլիս-հոկտեմբեր ամիսներին թվով 23 աշակերտներ կմասնակցեն միջազգային օլիմպիադայների 5՝ <<Մաթեմատիկա>>, <<Ինֆորմատիկա>>, <<Ֆիզիկա>>, <<Քիմիա>> և <<Կենսաբանություն>> առարկաներից:
--	--	---